ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի, Բյուրեղավան համայնք
Վազգեն Ա. Վեհափառի փողոց, հեռ. (222)65203 , էլ .փոստ byureghavan. kotayq @mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 սեպտեմբերի 2015 թվականի № 46 – Ա

## ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 9 – Ի N 09 (ՀԵՐԹԱԿԱՆ) ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15–րդ հոդվածով՝ **ավագանին որոշում է.**

1. Հաստատել Բյուրեղավանի քաղաքային համայնքի ավագանու 2015 թվականի սեպտեմբերի 9-ի - ի N 09 (հերթական) նիստի օրակարգը .

1) Բյուրեղավանի քաղաքային համայնքի սեփականություն համարվող գույքը օտարելու՝ նվիրելու մասին,

2) Բյուրեղավանի քաղաքային համայնքի սեփականություն համարվող Զորավար Անդրանիկի փողոցի 50/4 հասցեի հողամասը ուղղակի վաճառքով օտարելու մասին

3) «Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությունում իրականացված ստուգման արդյունքների քննարկում

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**Կողմ (6)** **Դեմ ( 0 )** **Ձեռնպահ (0)**

ԳԵՎՈՐԳ ԲԱԴԻԿՅԱՆ

ԱՐԹԻԿ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՍԼԱՎԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐԳԱՄ ՇԱՌՅԱՆ

ԹԱԳՈՒՀԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԱՐՄԱՆ ՕՀԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Մ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի, Բյուրեղավան համայնք
Վազգեն Ա. Վեհափառի փողոց, հեռ. (222)65203 , էլ .փոստ byureghavan. kotayq @mta.gov.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 սեպտեմբերի 2015 թվականի № 47 – Ա

### ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔՆ ՕՏԱՐԵԼՈՒ՝ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16–րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով և հիմք ընդունելով Բյուրեղավան քաղաքի 28շենքի 65 բնակարանի բնակիչ Աստղիկ Քամալյանի դիմումը՝ **ավագանին որոշում է.**

1. Հաշվի առնելով, որ Աստղիկ Քամալյանը իր ընտանիքով շուրջ 30 տարի բնակվում է Բյուրեղավան քաղաքի 28 շենքի 65 բնակարանում և այդ բնակարանը շահագործման հանձնելուց հետո իրենցից բացի այլ անձ չի բնակվել, մինչ այժմ այդ բնակարանի բոլոր կոմունալ վճարումները կատարել է ինքը, և որ Աստղիկ Քամալյանը օրենքով սահմանված ժամկետում չի սեփականաշնորհել բնակարանը, Բյուրեղավանի քաղաքային համայնքի սեփականությունը համարվող Բյուրեղավան քաղաքի 28 շենքի 65 բնակարանը ( վկայական № 2715616, տրված 2011թվականի փետրվարի 17-ին) 63.20քառակուսի մետր ընդհանուր մակերեսով, 2 - սենյականոց բնակարանը որպես ընդհանուր համատեղ սեփականություն օտարել՝ անհատույց հատկացնել (նվիրել) Աստղիկ Քամալյանի ընտանիքին՝

Քամալյան Աստղիկ Լևոնի՝ ծնված 1959 թվականի հուլիսի 22-ին

Քամալյան Իլյա Արչիլի՝ ծնված 1959 թվականի հունվարի 10-ին

Քամալյան Հայկ Իլյայի՝ ծնված 1988 թվականի դեկտեմբերի 1-ին

Քամալյան Արշակ Իլյայի՝ ծնված 1990 թվականի դեկտեմբերի 12-ին :

2. Բյուրեղավան քաղաքի 28 շենքի թիվ 65 բնակարանը դուրս գրել քաղաքապետարանի հաշվեկշռից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**Կողմ (6)** **Դեմ ( 0 )** **Ձեռնպահ (0)**

**ԳԵՎՈՐԳ ԲԱԴԻԿՅԱՆ** ________________

ԱՐԹԻԿ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՍԼԱՎԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐԳԱՄ ՇԱՌՅԱՆ

ԹԱԳՈՒՀԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԱՐՄԱՆ ՕՀԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Մ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի, Բյուրեղավան համայնք
Վազգեն Ա. Վեհափառի փողոց, հեռ. (222)65203 , էլ .փոստ byureghavan. kotayq @mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

09 սեպտեմբերի 2015 թվականի № 48 – Ա

### ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԶՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՓՈՂՈՑԻ 50/4 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16–րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 63-րդ հոդվածով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգով և հիմք ընդունելով այն փաստը, որ նշված հողամասը չի կարող օտարվել որպես առանձին միավոր՝ **ավագանին որոշում է.**

1.Քաղաքացի Հաբեթ Հակոբի Հովակիմյանին սեփականության իրավունքով պատկանող Բյուրեղավան քաղաքի Զորավար Անդրանիկի փողոցի թիվ 50/3 հասցեի պոմպակայանի (վկայական N12062015-07-0034, ծածկագիր 07-003-0011-0102) արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության 0.100848 հեկտար մակերեսով հողամասի ընդլայնման նպատակով Բյուրեղավանի քաղաքային համայնքի սեփականություն համարվող Բյուրեղավան քաղաքի Զորավար Անդրանիկի փողոցի թիվ 50/4 (վկայական 19082015-07-0009, ծածկագիր 07-003-0011-0103) հասցեի 0.100077 հեկտար մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության հողամասը ուղղակի վաճառքով օտարել Հաբեթ Հակոբի Հովակիմյանին (անձնագիր AM0755960 տրված 06 հունիսի 2012 թվականին, 059-ի կողմից) որպես սեփականություն գործող կադաստրային գնահատման արժեքով՝ 2942264 (երկու միլիոն ինը հարյուր քառասուներկու հազար երկու հարյուր վաթսունչորս) դրամով:

2. Նշված գույքը դուրս գրել Բյուրեղավանի քաղաքային համայնքի հաշվեկշռից:

3. Պայմանագրի վավերացման և գրանցման ծախսերը թողնել Հաբեթ Հակոբի Հովակիմյանի վրա:

Կողմ (6) Դեմ ( 0 ) Ձեռնպահ (0)

ԳԵՎՈՐԳ ԲԱԴԻԿՅԱՆ ____________

ԱՐԹԻԿ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ____________

ՍԼԱՎԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ____________

ԱՐԳԱՄ ՇԱՌՅԱՆ ____________

ԹԱԳՈՒՀԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ ____________

ԱՐՄԱՆ ՕՀԱՆՅԱՆ ____________

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Մ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի, Բյուրեղավան համայնք
Վազգեն Ա. Վեհափառի փողոց, հեռ. (222)65203 , էլ .փոստ byureghavan. kotayq @mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 սեպտեմբերի 2015 թվականի № 49 – Ա

**«ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՍՏՈՒԳՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16–րդ հոդվածի 32-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2015 թվականի հուլիսի 10-ի N1838-Ա հրամանով ստեղծված հանձնաժողովի կողմից կազմված 2015 թվականի հուլիսի 31-ի N 17 ստուգման ակտը , «Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության աշխատակիցների 2015 թվականի օգոստոսի 21 -ի դիմումը - բողոքը՝ **ավագանին որոշում է.**

1. 2015 թվականի հուլիսի 13-ից 24-ը «Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությունում իրականացված ստուգման արդյունքում հայտնաբերված խախտումների իրավական գնահատականը տալու, վնասը փոխհատուցելու և ընկերության աշխատակիցների դիմումում - բողոքում բարձրացված հարցերին իրավական լուծում տալու նպատակով դիմել իրավապահ մարմիններին :

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**Կողմ (6)** **Դեմ ( 0 )** **Ձեռնպահ (0)**

ԳԵՎՈՐԳ ԲԱԴԻԿՅԱՆ ______________

ԱՐԹԻԿ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ______________

ՍԼԱՎԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ______________

ԱՐԳԱՄ ՇԱՌՅԱՆ ______________

ԹԱԳՈՒՀԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ ______________

ԱՐՄԱՆ ՕՀԱՆՅԱՆ ______________

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Մ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ